Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Գորիսի քաղաքային պատմական փողոցների վերականգնում

Իրագործելիության ուսումնասիրություն

Բովանդակություն

1. Ամփոփ նկարագրություն 3
1.1 Ծրագրի նպատակը 3
1.2 Ծրագրի խնդիրը 3
1.3 Հատուկ խնդիրը 3
1.4 Հիմնական տեղեկություններ 3
1.5 Ներկայիս կարգավիճակը 3
1.6. Ծրագրի առաջարկվող փուլերը 4
1.7 Մեթոդաբանություն 4
1.8 Բյուջետային կարիքների և փուլերի ընդհանուր գնահատում 5
2. Ներածություն 6
2.1 Տեխնիկական գնահատում 6
2.2 Ֆինանսական գնահատում 6
2.3 Առկա նյութերը և պայմանները 6
2.4 Առաջարկների նախագծումը (և գծագիրը) 6
2.5 Պատասխանատու մարմինները 6
2.6 Հղումներ 6
3. Աշխատանքների համառոտ նկարագիրը 8
3.1 Ներդրման/ծրագրի նկարագրությունը 8
3.2 Ծրագրի իրականացման մոդել 8
3.3 Ծրջանակային պայմանների ցանկ 9
3.4 Արդյունքներ և օգուտներ 9
3.5 Իրավական դաշտը 9
3.6 Սոցիալական և տնտեսական իրագործելիությունը 9
3.7 Իրականացման ռազմավարությունը 10
3.8 Կայունություն 10
4. Ռիսկի գնահատում 11
5. Գործողություններ և պատասխանատու անձինք/կազմակերպություններ 14
6. Տեղեկագիրը կազմեց 14

1. Ամփոփ նկարագրություն

1.1 Ծրագրի նպատակը

Առաջարկվող ծրագիրը նպատակ ունի ապահովել Գորիսի պատմական կենտրոնի պահպանումը և շահագործումը՝ միջավայրի սկզբնական տեսքը վերականգնելու և այն Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը դարձնելու միջոցով: Ծրագիրը նպատակ ունի նաև բարելավել բնակիչների կենսամակարդակը:

1.2 Ծրագրի խնդիրը

Ծրագրի խնդիրն է վերակառուցել պատմական կենտրոնին հարակից հիմնական փողոցները, մայթերը և անցուղիները, արդիականացնել ջրահեռացման համակարգը և կառուցել հեծանվային արահետներ, ինչպես նաև ապահովել հասանելիություն հաշմանդամների համար:

1.3 Հատուկ խնդիրը

Ծրագրի հատուկ խնդիրն է խթանել Գորիս քաղաքի կեցության մակարդակը՝ տեղի բնակչության համար նոր աշխատատեղեր և ձեռնարկատիրական հնարավորություններ ստեղծելու միջոցով:

1.4 Հիմնական տեղեկություններ

Գորիս քաղաքը տեղակայված է Զանգեզուրում: Այն գտնվում է Երևանից 250 կմ հեռավորության վրա՝ Հայաստանի հարավ-արևելքում: Առաջին բնակավայրը եղել է կիրճի անհարթ լայնվածքի վրա՝ ժայռապատ և փոսաշատ գոտում, որտեղ բարձրանում են կոնաձև ապառաժներ: Այն գրավել է 5.5-6 հեկտար տարածք: Բնակավայրը մոտիկ է եղել առևտրային ճանապարհին և ունեցել է բավականին հիանալի նախագծված տարածական կառուցվածք: Այստեղ կառուցված են եղել Զանգեզուրի շրջանին յուրահատուկ բնակելի տներ, որոնք ժամանակի ընթացքում լքվել են: 19-րդ դարի սկզբին այստեղ կար 119 տնային տնտեսություն: 1850-ականներին նախաձեռնվեց Գորիսի նոր քաղաքի ձևավորումը՝ Վարարակն գետի աջ ափին: Շինարարական աշխատանքները հատկապես ակտիվ էին 1870-ականներին նահանգապետ Ստարիցկու կառավարման ժամանակ՝ Մանուչար Բեկ Մելիք Հուսեինյանի ակտիվ մասնակցությամբ և գերմանացի ճարտարապետի նախագծմամբ: Գորիսի նոր մայր պլանը (1947թ.) նախագծվել է 18-րդ դարի ռուսական քաղաքաշինության սկզբունքներին համապատասխան: Հաշվի առնելով լանդշաֆտը՝ ընտրվել է դեպի հյուսիս թեքվող շինարարական լուծմամբ ուղղահայաց փողոցների ցանցի սկզբունքը: Նախագծվել են տարբեր միջակայքերով քառակուսի և ուղղանկյուն բնակելի շրջաններ (106x106մ, 106x212մ) ունեցող հատվող փողոցներ, ինչպես նաև հանրային կենտրոն (212x212): Առանցքային փողոցները նախագծվել են 24մ երկարությամբ, իսկ մյուսները՝ 17մ երկարությամբ: Մայթերը սալարկված էին՝ մշակված հիմնականում թթի, մասամբ՝ կեռասի և բալի ծառերով: Մայթերի կողքին կառուցվել են դրենաժային առվակներ:

1.5 Ներկայիս կարգավիճակը

1947 թվականին Գորիս քաղաքի մանրամասն պլան մշակվեց «Հայպետնախագիծ» ինստիտուտում ճարտարապետ Պ. Խոյեցյանի կողմից, որի համաձայն գոյություն ունեցող ուղղանկյուն ցանցը մեխանիկորեն տարածվեց բնակավայրերի հյուսիսային և արևմտյան լանջերին, ինչը մի շարք խնդիրների պատճառ հանդիսացավ.

- մասնավորապես, դեպի Սյունիք փողոցի արևմուտք ձգվող երկայնական փողոցների արևելյան և արևմտյան մայթերը տարբեր մակարդակների վրա են, երկայնական փողոցների արևմտյան հատվածների թեքությունը չափազանց կտրուկ է:
- Ավելին, Սիսիան և Խորենացի փողոցների միջև Բախշյան փողոցի հատվածում թեքությունը այնքան կտրուկ է, որ կառուցվել են աստիճաններ, ինչը այս հատվածը

երթևեկության համար անանցանելի է դարձրել:

- Գորիսի փողոցները և մայթերը նախկինում պատված են եղել գլաքարով, բայց այժմ դրանք ասֆալտապատ են:
- Մայթերի եզրերի քարերը մաշվել են. որոշ տարածքներում դրանք պարզապես բացակայում են:
- Նախկինում նստարաններ էին տեղադրված բնակելի շենքերի հիմնական մուտքերի մոտ, որտեղ հարևանությունը հավաքվում էր, մտքեր փոխանակում տարբեր հարցերի շուրջ կամ պարզապես զրուցում և անցորդներին նայում: Դա ստեղծում էր քաղաքային բացառիկ ճարտարապետական միջավայր: Ներկայումս այդ նստարանները հիմնականում չկան:
- Դրենաժն անցնում է բաց առվակներով՝ փողոցների երկայնքով, որտեղից թափվում է Վարարակն գետը: Բայց ներկայումս այս առվակները մասամբ քանդվել են ու վնասվել և հաճախ խցանված են աղբով:
- Ի լրումն, առվակների որոշ հատվածներ, հիմնականում գետամերձ շրջաններում, ճահճացած են:

1.6. Ծրագրի առաջարկվող փուլերը

Քաղաքի փողոցների վերականգնում Ծրագիրը պետք է իրականացվի փուլերով: Առաջարկվում են հետևյալ փուլերը՝

- Դրենաժային առվակների վերականգնում
- Պատմական կենտրոնին հարակից հիմնական փողոցների մայթերի և անցուղիների վերակառուցում
- Նստարանների և աղբամանների տեղադրում փողոցներում
- Հաշմանդամների հասանելիություն ապահովող միջոցների տրամադրում, մասնավորապես՝ խաչմերուկներում
- Պատմական կենտրոնի լուսավորության ապահովում
- Մայթերի կողքին հեծանվային արահետների կառուցում:

1.7 Մեթոդաբանություն

- Գոյություն ունեն պատմական կենտրոնը ձևավորող մեծ թվով տեսարժան ճարտարապետական կառույցներ: Հիմնական խնդիրներից մեկը կլինի տիպային միջավայրի, մասնավորապես՝ պատմական կենտրոնին հարակից մայթերի և անցուղիների ճշգրիտ վերականգնումը:
- Գորիսի փողոցները և մայթերը նախկինում պատված են եղել գլաքարով, բայց այժմ դրանք ասֆալտապատ են:
- Մայթերի եզրերի քարերը մաշվել են. որոշ տարածքներում դրանք պարզապես բացակայում են:
- Պետք է վերատեղադրել նստարաններ բնակելի շենքերի հիմնական մուտքերի մոտ, ինչով կվերականգնվի հին քաղաքի միջավայրը:
- Մենք առաջարկում ենք վերանորոգել Գորիսի մայթերը տեղական գլաքարով՝ խուսափելով ասֆալտից, որով կվերականգնվի նախնական տեսքը: Քաղաքի պատմական կենտրոնում փողոցները նույնպես պետք է պատվեն գլաքարով, բայց պաշտպանված գոտուց դուրս միայն մայթերը պատելը կարող է բավական լինել:
- Գորիսում երթևեկելի մասը սովորաբար առանձնացված է մայթերից դրենաժային առվակներով, և երկուսն էլ գտնվում են նույն մակարդակի վրա: Մենք առաջարկում ենք առվակները ծածկել պաշտպանիչ լարացանցով: Սրանով, մենք կպահպանենք միասնական կառուցվածքը, որը թույլ կտա հաշմանդամներին անվասայլակներով հատել փողոցը՝ առանց դժվարության: Այսպիսով, առնվազն հետիոտնային անցումներում, ինչպես նաև ավտոտնակների և բակերի մուտքերի մոտ (եթե ոչ ամբողջ

տարածքում) առվակների վրա պետք է իրականացվի պաշտպանիչ ցանցապատում:

1.8 Բյուջետային կարիքների և փուլերի ընդհանուր գնահատում

No	Անվանումը	Միավոր	Միավորի քանակ	Միավորի գին	Ընդհանուր արժեք	Ընդհանուր արժեք (1€=530Դ)
1	Դրենաժային համակարգի վերականգնում	մ	25.000	28.000Դ	700.000.000Դ	1.312.582€
2	Դրենաժային համակարգի վերականգնման նախագծի մշակում				70.000.000Դ	131.258€
3	Մայթերի վերականգնում	$մ^2$	25.000	70.000.000Դ	1.000.000.000Դ	1.875.117€
4	Մայթերի վերականգնման նախագծի մշակում				100.000.000Դ	187.512€
5	Մետաղալարային ցանցերի տեղադրում	$մ^2$	40	40.000Դ	2.800.000Դ	5.250€
6	Փողոցների լուսավորություն	գծմ	50	500.000Դ	25.000.000Դ	47.169€
7	Լուսավորության նախագծի մշակում				1.250.000Դ	2.358€
8	Նստարանների տեղադրում	հատ	30	50.000Դ	1.500.000Դ	2.813€
9	Այլ ծախսեր				1.000.000.000Դ	1.875.117€
	Ընդհանուր				**2.901.550.000Դ**	**5.441.051€**

2. Ներածություն

2.1 Տեխնիկական գնահատում

Տեխնիկապես մենք որևէ էական դժվարություն չենք տեսնում ծրագրի իրականացման հարցում: Միակ խնդիրը կարող է հանդիսանալ այն փաստը, որ որոշ սեփականատերեր ընդլայնել են իրենց տները առանց թույլտվության և դրանով խաթարում են ընդհանուր պատկերը: Ուստի, ծրագրի հաստատման դեպքում անհատական շինարարությունը պետք է լիովին արգելվի տարածքում՝ առանց իրավասու մարմնի կողմից հատուկ թույլտվություն ստանալու, և միջավայրին անհամապատասխան բոլոր ավելացված շինությունները պետք է քանդվեն: Բայց սա պետք է կատարվի հնարավորինս քիչ վնաս տալով տեղացիներին:

2.2 Ֆինանսական գնահատում

Նախահաշվարկով ծրագրի իրականացման համար կպահանջվի 2.901.550.000 ՀՀ դրամ (5.441.051): Միանգամայն իրատեսական է ստանալ նման ֆինանսավորում, եթե կառավարությունը, ոլորտում աշխատող միջազգային կազմակերպությունները, ՀԿ-ները և հիմնադրամները հաստատեն ծրագիրը և այն համարեն բարձր առաջնահերթության խնդիր: Բացի դա, աշխատանքները կարող են կատարվել փուլ առ փուլ:

2.3 Առկա նյութերը և պայմանները

Վերականգնման հիմնական աշխատանքներում նախատեսված է օգտագործել տեղական քարեր և նյութեր: Պահանջվող բոլոր նյութերը կան Հայաստանում, և խնդիր չի առաջանա դրանք ձեռք բերելու հարցում: Ծրջանում և հանրապետությունում կան շատ փորձառու շինարարներ, որոնք ունեն պահանջվող հմտություններ և գիտելիք: Բայց, ամենայն հավանականությամբ, նրանք որոշակի լրացուցիչ վերապատրաստման կարիք կունենան:

2.4 Առաջարկների նախագծումը (և գծագիրը)

Նախագիծը և գծագրերը կարելի է մշակել հետագայում:

2.5 Պատասխանատու մարմինները

Պատասխանատու մարմիններն են՝ Մշակույթի նախարարությունը, Սյունիքի մարզպետարանը և Գորիսի քաղաքապետարանը, ինչպես նաև բնակելի տների և առևտրային շինությունների սեփականատերերը:

2.6 Հղումներ

2016 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գորիս քաղաքում իրականացվել են գործնական հետազոտական աշխատանքներ: Ծրագիրը կազմելու և ներկայացնելու համար կիրառվել են հետևյալ նյութերը և հոդվածները:

- Գորիսի պատմամշակութային հիմնավորման նախագիծ, Մշակույթի նախարարություն, Մշակութային ժառանգության հետազոտական կենտրոն, Երևան, 2011 թվական
- Հախվերդյան Ս., Գորիսի պատմությունը, Երևան, 2005 թվական
- Հարությունյան Վ., Արևելյան Հայաստանի քաղաքների հատակագծումը և կառուցապատումը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, «Պատմական և բանասիրական ամսագիր», 1977 թվական, թիվ 4
- Հակոբյան Տ., Խորհրդային Հայաստանի քաղաքները, Երևան, 1977 թվական
- Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973 թվական
- Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972 թվական
- Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրությունը, Երևան, 1968 թվական

- Մնացականյան Ս., Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960 թվական
- Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893 թվական

3. Աշխատանքների համառոտ նկարագիրը

3.1 Ներդրման/ծրագրի նկարագրությունը

Անհրաժեշտ է պահպանել բնակելի տների միջավայրը՝ կամարաձև մուտքերով և մայթերի վրա հարակից նստարաններով: Այս միջավայրը երկար ժամանակ բնորոշ է եղել այս տեղանքին: Տեղացիները սիրում էին նստել տների առջև՝ տարբեր հարցերի շուրջ մտքեր փոխանակելու կամ պարզապես զրուցելու և անցորդներին նայելու համար: Դա ստեղծում էր քաղաքային բացառիկ ճարտարապետական միջավայր: Ներկայումս այդ նստարանները հիմնականում չկան:

Նոր նստարանների տեղադրումը կօգնի պահպանել քաղաքի միջավայրը: Առաջարկվող նախագիծը հենվում է հին քաղաքաշինական նախագծման կառուցվածքի վրա, որի նպատակն է մասամբ վերականգնել այն և դարձնել զբոսաշրջային կենտրոն: Նախատեսված աշխատանքները ոչ միայն կապահովեն հուշարձանների պահպանումը, այլև կստեղծեն նոր աշխատատեղեր և կխթանեն զբոսաշրջության զարգացումը, և համապատասխանաբար՝ քաղաքացիական կյանքի ակտիվացումը: Մակերևութային դրենաժի համար կարելի է օգտագործել առկա ջրահեռացման առվակները, սակայն անհրաժեշտ է ամբողջովին վերականգնել առվակները տեղական բազալտ քարերով: Առվակները պետք է լայնացվեն և խորացվեն, քանդված և վնասված հատվածները պետք է վերակառուցվեն, հատկապես գետաբերանին ընկած տարածքներում, ինչը կապահովի ջրի անխափան հոսքը դեպի գետ և կկանխարգելվի էվտրոֆիկացիան:

Հիմնական փողոցների լայնությունը թույլ է տալիս կառուցել առանձին հեծանվային արահետներ մայթերի եզրին, որոնք կարող են լինել մեկ մայթին հարակից երկկողմանի օժանդակ ճանապարհներ կամ յուրաքանչյուր մայթին՝ միակողմ օժանդակ ճանապարհներ: Նախընտրելի է հեծանվային արահետը տարանջատել երթևեկելի մասից քարերով, բետոնով կամ ռեզինապատ քարերով՝ ելնելով անվտանգության նկատառումներից: Մենք կարծում ենք առաջնահերթություն պետք է տրվի տեղական քարերին: Հիմնվելով առկա ենթակառուցվածքի վրա՝ մենք առաջարկում ենք հեծանվային արահետները կառուցել Սյունիք փողոցի արևելյան հատվածի երկայնակի և լայնակի ճանապարհներին: Ի լրումն, մենք առաջարկում ենք վերակառուցել Սաթյան փողոցը, որը տանում է դեպի Հին Գորիս, ներառյալ դրա վերակառուցումը որպես հեծանվային արահետ: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի գետափնյա փողոցին, որը պետք է տարածվի մինչև ստադիոն, իսկ փողոցի երկայնքով գետափնյա հատվածներում պետք է կառուցվեն հեծանվային արահետներ, վազքուղիներ և ճանապարհներ:

Գնահատելով Գորիսի երթևեկությունը, ինչպես նաև հետագա բարեկարգումը, հաշվի առնելով հուշարձանների ֆիզիկական պաշտպանության անհրաժեշտությունը և ելնելով բնակիչների առողջական նկատառումներից՝ մենք առաջարկում ենք թույլ չտալ բեռնատար մեքենաների մուտքը Անկախություն և Մաշտոց փողոցներ, ինչպես նաև Դավիթ Բեկ փողոցի և քաղաքի կենտրոնի միջև ընկած տարածքներ:

Հետագայում, քաղաքի մշակութային և ժամանցային բարեկարգմանը զուգընթաց, Մաշտոց և Մակիչ փողոցների միջև Կոմիտաս փողոցի հատվածը և Կոմիտաս ու Գուսան Աշոտ փողոցների միջև Մաշտոց փողոցի հատվածը, ինչպես նաև ամբողջ հանրային կենտրոնը պետք է դառնա հետիոտնային:

3.2 Ծրագրի իրականացման մոդել

Գորիսի պատմական կենտրոնը ներառված է Հայաստանի պատմական հուշարձանների ցանկում: Ուստի, նախընտրելի է, որ Հայաստանի մշակույթի նախարարությունը և Գորիսի քաղաքապետարանը համատեղ պատասխանատվություն ստանձնեն ծրագրի լիակատար իրականացման համար՝ սկսած նախագծից, մինչև վերականգնման աշխատանքները և տեղանքի հետագա շահագործումն ու պահպանումը:

3.3 Շրջանակային պայմանների ցանկ

Գորիսի հիմնական կենտրոնը ազգային կարևորություն ներկայացնող հուշարձան է: Ուստի, նշված տարածքում բոլոր շինարարական աշխատանքները պետք է ստանան ոչ միայն Գորիսի քաղաքապետարանի հավանությունը, այլև պետք է հաստատվեն մշակույթի նախարարության կողմից:

3.4 Արդյունքներ և օգուտներ

Արդյունքները.

- Լիակատար գործող և արդիականացված դրենաժային համակարգ
- Բարելավված մայթեր և փողոցներ
- Նստարաններ և աղբամաններ բնակելի շինությունների մոտ
- Հարմարեցված անցումներ հաշմանդամների համար
- Հատուկ հեծանվային արահետներ
- Հետիոտնային տարածքներ
- Փողոցային լուսավորություն
- Օգուտները
- Ծրագրի առաջին շահառուները կլինեն տեղի բնակիչները, քանի որ ծրագրի շնորհիվ կենսամակարդակն զգալիորեն կբարձրանա:
- Ավելի շատ հնարավորություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Տեղի բնակիչներն օգուտ կքաղեն նաև այն փաստից, որ Գորիսը կարող է դառնալ պահանջարկ վայելող զբոսաշրջային կենտրոն, ինչի շնորհիվ նրանց տները կամ դրանց ինչ-որ հատվածներ կարող են վերափոխվել փոքրիկ հյուրանոցների, կացարան և նախաճաշ տրամադրող հյուրատների, ռեստորանների, հուշանվերների խանութների ու որակյալ տեղական սննդի առևտուր և այլ փոքրածավալ բիզնեսներ իրականացնող վաճառակետերի:
- Տեղի բնակիչների համար նոր աշխատատեղեր՝ թե՛ ծրագրի իրականացման ընթացքում և թե՛ դրա ավարտից հետո:
- Հայաստանի և աշխարհի զբոսաշրջիկները կվայելեն զբոսաշրջության նոր հնարավորությունները, այդ թվում՝ հետիոտների համար նախատեսված գոտին և հեծանվային արահետները:
- Հինավուրց Գորիսի պահպանումը միայն տեղական մակարդակով նախասահմանված անելիք չէ. ընդհանուր առմամբ, այն շատ կարևոր է Հայաստանի պատմամշակութային ժառանգության համար:

3.5 Իրավական դաշտը

Գորիսում քաղաքաշինության գործընթացն իրականացվում է ՀՀ Կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի թիվ 21 արձանագրության համաձայն: Բոլոր շինարարական աշխատանքները խստորեն վերահսկվում են Գորիսի քաղաքապետարանի կողմից:

3.6 Սոցիալական և տնտեսական իրագործելիությունը

Ծրագրի սոցիալական իրագործելիությունն ակնհայտ է, ինչի մասին մանրամասն ներկայացված է վերը: Ինչ վերաբերում է տնտեսական իրագործելիությանը, ապա դրա համար հատուկ գնահատում է անհրաժեշտ: Բայց քանի որ տեղանքը հեռու չէ դեպի Ստեփանակերտ, ինչպես նաև Կապան, Մեղրի և Իրան տանող ճանապարհից, մենք համոզված ենք, որ նոր հիմնվող զբոսաշրջային կենտրոնը ճանապարհորդների համար կարող է սիրելի կայանատեղի դառնալ: Ակնհայտորեն, պետք է ձեռնարկվեն որոշ ոչ ավանդական քայլեր՝ տեղանքի հետագա շահագործումն ու սպասարկումն ապահովելու համար: Քանի որ այն դառնալու է զբոսաշրջային կենտրոն, գուցե ողջամիտ կլինի զբոսաշրջության տեղական որոշ հարկեր սահմանելը, որոնք քաղաքապետարանի բյուջեի հետ միասին կարող են բավարար լինել

հետագա շահագործման և փոքրածավալ վերանորոգման աշխատանքների համար, եթե դրա անհրաժեշտությունը լինի: Ենթակառուցվածքը վերջնականացնելուց հետո Մշակույթի նախարարությունն այստեղ կարող է կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ և հանդիսություններ՝ խթանելով զբոսաշրջությունը և, դրանով իսկ, եկամտի ավելի շատ հնարավորություններ ստեղծելով տեղի բնակիչների համար:

3.7 Իրականացման ռազմավարությունը

Ստորև ներկայացվում է գործողությունների առաջարկվող պլանը.

- Նախագծի ուղեցույց
- Նախագծի փաթեթ
- Պիլոտային ծրագիր քաղաքի քառորդ մասում
- Դրենաժային համակարգի վերականգնում
- Մայթերի և փողոցների վերականգնում
- Հատուկ անցումների տեղադրում հաշմանդամների համար
- Հեծանվային արահետների կառուցում
- Փողոցներում ձևավորման փոքր տարրերի տեղադրում (նստարաններ, աղբամաններ, զբոսաշրջային վահանակներ, քարտեզներ և այլն)
- Լուսադիոդային լամպերով փողոցների լուսավորության համակարգի վերականգնում
- Որոշ հատվածների վերափոխում հետիոտնային տարածքների

3.8 Կայունություն

Վերականգնված տների ապագա տերերը լիակատար պատասխանատվություն կստանձնեն իրենց սեփականության շահագործման և պահպանման համար: Տեղանքի շահագործման համար կարող է բավարար լինել զբոսաշրջային հատուկ հարկը և քաղաքապետարանի ու Մշակույթի նախարարության կողմից տրամադրված ռեսուրսները՝ ապահովելով դրա կայունությունը: Ջրատար առվակների հետագա շահագործման ու սպասարկման պատասխանատվությունը կրում է Գորիսի քաղաքապետարանը, որը դրա համար ունի հատուկ բյուջե:

4. Ռիսկի գնահատում

Մենք գտնում ենք, որ ծրագրի իրականացմանն առնչվող ռիսկերը նվազագույն են: Մենք պետք է շատ զգույշ լինենք պատմական միջավայրի պահպանման հարցում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է մայթերին և դրենաժային առվակներին՝ ավանդական տեսքը պահպանելու համար: Կարիք կլինի մշակել առավել մանրամասն և մասնագիտական պլան և նախագիծ, որպեսզի հետիոտնային հատվածները չխաթարեն առօրյա երևեկությունը:



Նկ.1. Գորիսի և պաշտպանվող գոտու քարտեզը (հաստատված ՀՀ մշակույթի նախարարության կողմից, 2012թ.)



Նկ. 2. Գորիսի փողոցներից մեկի վերակառուցման պլանի օրինակ



Նկ. 3. Առվակների վրա պողպատե լարացանցերի պլան

Նկ.3,4. Դրենաժային առվակներ

Նկ.5. Սյունիք փողոց

5. Գործողություններ և պատասխանատու անձինք/կազմակերպություններ

No	Գործողության նկարագրություն	Պատասխանատու մարմին	Տևողություն
1	Ծրագրի կառավարման թիմի ձևավորում	Տեղական ինքնակառավարման մարմին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	ամիս 1 > ամիս 2
2	Նախագծման աշխատանքների իրականացում	Տեղական ինքնակառավարման մարմին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	ամիս 2 > ամիս 4
3	Վերականգնման աշխատանքների իրականացում	Տեղական ինքնակառավարման մարմին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	6-րդ ամսից հետո
5	Տեղանքի շահագործում և պահպանում	Տների և բիզնեսների սեփականատերեր, տեղական ինքնակառավարման մարմին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Վերականգնման ավարտից հետո

6. Տեղեկագիրը կազմեց

Փորձագետ՝ Նանար Քալանթարյան (էլեկտրոնային հասցե՝nanar.kalantarian@gmail.com)